Ավետիք Իսահակյան

Ծառա Սիմոնը

Վաղուց անցած-գնացած օրերից է այս վերհիշումը:
Իմ բարեկամ մի ընտանիք Սիմոն անունով մի սպասավոր ուներ: Սիմոնը տարիներից ի վեր ծառայում էր նրանց մոտ. գոհ էին նրա աշխատանքից և թվում էր, որ ինքն էլ գոհ էր նրանցից:
Մի օր Սիմոնը ներկայանում է տանտիրուհուն և ասում.
Խանում, ներող եղեք, ես ուզում եմ տուն գնամ, մեր գեղը: Շատ շնորհակալ եմ ձեզանից, բայց էլ չեմ ուզում ծառայել:
Ինչո՞ւ, Սիմոն ջան,– զարմացած հարցնում է տիկինը, չէ" որ մենք քեզ միշտ լավ ենք նայել, տարիներ շարունակ մեր տանն ես եղել, սովորել ենք իրար: Հիմա ի՞նչ պատահեց, ասա սրտաբաց: Թե ռոճիկդ քիչ ես գտնում՝ ավելացնենք: Էնպես լինի, որ գոհ լինես մեզնից և մեր տանը մնաս:
Չէ՛, խանում ջան, գիտեմ, որ ինձ հետ լավ եք վարվել, և ռոճիկիս մասին էլ գանգատ չունեմ, միայն թե ուզում եմ գեղ գնամ, ժամանակավոր. կարելի է մի քանի ամիս անց էլի ետ գամ:
Բայց ինչո՞ւ ես մնում այդքան երկար ժամանակ, գեղում ի՞նչ կա որ... Սիմոնը լռում է:
Մեկ էլ որ՝ չասացիր գնալուդ պատճառը:
Խանում ջան, ճշմարիտը որ կուզես իմանալ՝ ասեմ, վճռողական շեշտով պատասխանում է Սիմոնը, –ուզում եմ գնալ, որ էլ իմ անունը չլսեմ: Չլսեմ անունս՝ ականջս հանգստանա: Թե չէ, էս ինչ կյանք է, ես կխելոռեմ: Շարունակ, ամեն օր Սիմոն, սամավարը քցե, շո՛ւտ, շո՛ւտ արա: Սամավարը քցում եմ, կրակը փչում եմ, մեկ էլ Սիմո՛ն, աղայի կոշիկները արի տար, շուտ սրբիր՝ բեր: Վազում եմ, կոշիկները տանում, սրբում եմ շտապով, հանկարծ՝ Սիմո՛ն վազե

ֆայտոն բեր, օրիորդը տեղ է գընում, շո՛ւտ, շո՛ւտ: Վազում եմ ֆայտոն բերելու՝ սամավարը թողնելով իր բախտին, կոշիկները սրբելը կիսատ, ֆայտոնը բերում եմ: Սամավարը եփել, ջուրը թափվել Է. նորից ջուր եմ լցնում, նորից ածուխ եմ քցում: Մեկ՝ սամավարն եմ փըչամ, մեկ՝ կոշիկները սրբում:
Նորից անունս.
Տո՛ տղա Սիմոն, չայն ո՞ւր մնաց, բերաններս չորացավ: Դեհ, գնա մի լիմոն Էլ բեր, միայն շո՛ւտ արա:
Մյուս կողմից աղայիս ձայնը.
Տո՛, Սիմոն, կոշիկ սըբե՞լ Էր, թե սենյակ սրբել: Մի ժամ եղավ: Շտապում եմ, շո՛ւտ արա:
Ձեռքս կոշիկի միջից չհանած՝ դռան զանգը տալիս են:
Սիմո՛ն, վազի՛ր, դուռը բաց, էդ միջոցին, մեկ էլ պստիկ տղան. Սիմոն, թռի մի տուփ պապիրոս բեր: Դե՛հ, քեզ տեսնեմ... Դեհ, խանում ջան, բա ես ո՞նց անեմ, որ չխելոռեմ: Օրը հազար անգամ անունս լսում եմ.
- Սիմո՛ն, արի,
Սիմո՛ն, գնա,
Սիմո՛ն, տար,
Սիմո՛ն, բեր,
Սիմո՛ն, վազե,
Սիմո՛ն, թռիր,
Սիմո՛ն, Սիմո՛ն,
էլի
Սիմո՛ն, Սիմո՛ն...
էդ՝ ականջս խարտոցող Սիմոն անունը երազիս մեջ էլ եմ լսում, քունս հարամ է անում:
Տունը մարդ չեղած ժամանակ էլ պատերը ձեն են տալիս.
-Սիմո՛ն, Սիմո՛ն:
Անունս ինձ թշնամի է դառել, աչքիս գրողն է դառել.
կատաղեցնում է ինձ, գժվեցնում է ինձ: Կուզեմ փախչեմ աշխարհի ծայրը, որ զզվելի անունս էլ չլսեմ:
Չէ՛, խանում ջան, էլ ուժ չունեմ, հիմի շատ եմ խնդրում իրավունք տաս, երթամ մեր գեղը, մի քանի ամիս ականջս հանգստանա, հետո նորից կգամ: Խոսք եմ տալիս, միամիտ եղեք...

1931

Յատուկ Պոեմ